

TELCELL	«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	Ծածկագիր՝ ԿԿ/290724/02	Խմբագրություն՝ 1.0	Էջ 1 / 6
			Ոչ գաղտնի	

Հավելված

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ Տնօրենների Խորհրդի
29.07.2024թ. № 290724 որոշում

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կարգավորման առարկան

1. «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության շահութաբաժնային քաղաքականության (այսուհետ՝ Շահութաբաժնային քաղաքականություն) նպատակն է սահմանել «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն) շահութաբաժնային քաղաքականության սկզբունքները, ընկերության բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարման պայմանները, շահութաբաժինների հաշվարկման և վճարման կարգը, այդ թվում՝ վճարման ժամկետներն ու ձևը:

2. Շահութաբաժնային քաղաքականությունը մշակված է՝ համաձայն Հայաստանի Հնարապետության օրենսդրության և ընկերության կանոնադրության:

2. Կիրառման շրջանակը

3. Շահութաբաժնային քաղաքականությունը կիրառվում է ընկերության կառավարման մարմինների և շահագրգիռ այլ անձանց կողմից:

3. Հիմնական հասկացություններ

4. Սույն փաստաթղթում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **Ընդհանուր ժողով**՝ ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով:

2) **Ընկերության խորհուրդ**՝ ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը իրականացնող տնօրենների խորհուրդ:

TELCELL	«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	Ծածկագիր՝ ԿԿ/290724/02	Խմբագրություն՝ 1.0	Էջ 2 / 6
			Ոչ գաղտնի	

3) **բաժնետոմս**՝ այն արժեթուղթը, որը հավաստում է դրա տիրոջ (բաժնետիրոջ)՝ ընկերության շահույթից մաս ստանալու, ընկերության կառավարմանը մասնակցելու և նրա լուծարումից հետո մնացած գույքից մաս ստանալու իրավունքը:

4) **շահութաբաժին**՝ զուտ շահույթի այն մասը, որը ենթակա է շահութաբաժին ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի միջև բաշխման՝ ընկերությունում նրանց ունեցած մասնակցության բաժիններին համապատասխան:

5) **հետգնված բաժնետոմսեր**՝ ընկերության բաժնետերերից ընկերության հետգնած սեփական բաժնետոմսեր:**բաժնետերերի ռեեստր**՝ մասնագիտացված կազմակերպության կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով վարվող անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստր: Ռեեստրում նշվում են յուրաքանչյուր բաժնետիրոջ մասին տեղեկություններ, ինչպես նաև գրառվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված տեղեկություններ:

3. Շահութաբաժնային քաղաքականության սկզբունքները

5. Շահութաբաժնային քաղաքականությունը հիմնվում է ընկերության շահութաբաժինների չափերը որոշելիս ընկերության ֆինանսական կայունության, կապիտալացման և իրացվելիության բարձրացման, ընկերության և նրա բաժնետերերի շահերի հավասարակշռվածության, ներդրված կապիտալի շահութաբերության ապահովման, բաժնետերերի իրավունքների պաշտպանության վրա:

6. Բաժնետոմսերի դիմաց տարեկան և միջանկյալ շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումն Ընդհանուր ժողովի իրավասությունն է:

7. Շահութաբաժինների վճարման և դրանց չափերի մասին որոշում ընդունելու դեպքում հաշվի են առնվում ընկերության իրացվելիության և վճարունակության ընթացիկ ու կանխատեսվող մակարդակները, առաջիկա ծրագրերը և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

8. Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների բացակայության դեպքում ընկերությունը պարտավոր է ժամանակին և ամբողջությամբ վճարել հայտարարված շահութաբաժինները: Նշված պարտավորությունները չկատարելու համար ընկերությունը պատասխանատվություն է կրում բաժնետերերի առջև՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

TELCELL	«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	Ծածկագիր՝ ԿԿ/290724/02	Խմբագրություն՝ 1.0	Էջ 3 / 6
			Ոչ գաղտնի	

4. Շահութաբաժինների վճարման պայմանները

9. Ընկերության շահութաբաժինների վճարման պայմաններն են՝

1) ընկերությունում զուտ շահույթի առկայությունը, որն սահմանվել է նախորդ ֆինանսական ժամանակաշրջանի արդյունքներով:

2) շահութաբաժինների վճարման՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանափակումների բացակայությունը:

3) շահութաբաժինների տարեկան վճարման դեպքում ֆինանսական ժամանակաշրջանի արդյունքներով առաջացած շահութաբաժինների վճարման (հայտարարման) մասին Ընդհանուր ժողովի որոշման, ինչպես նաև Ընկերության խորհրդի որոշման առկայությունը, որը պարունակում է շահութաբաժինների չափերի և դրանց վճարման կարգի մասին առաջարկ:

4) շահութաբաժինների միջանկյալ վճարման դեպքում ֆինանսական ժամանակաշրջանի արդյունքներով առաջացած շահութաբաժինների վճարման (հայտարարման) մասին ընկերության խորհրդի որոշման առկայությունը:

10. Սույն փաստաթղթի իմաստով ֆինանսական ժամանակաշրջան է համարվում այն ժամանակաշրջանը, որի համար վճարվում են շահութաբաժինները:

5. Շահութաբաժինների չափերի որոշումը

11. Շահութաբաժինները կազմում են ընկերության շահույթի մի մասը: Շահութաբաժիններն արտահայտվում են մեկ բաժնետոմսին ընկնող դրամական գումարով:

12. Համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության՝ ընկերության բաժնետերերին շահութաբաժինները վճարվում են շահույթից՝ հարկերը վճարելուց հետո (զուտ շահույթ), որը հաշվարկվում է օրենսդրության պահանջներին համապատասխան կազմված ֆինանսական հաշվետվության հիման վրա:

13. Նախորդ ֆինանսական ժամանակաշրջանի արդյունքներով մեկ հասարակ բաժնետոմսին ընկնող շահութաբաժնի չափը որոշվում է՝ որպես հասարակ բաժնետոմսերի գծով վճարվող շահութաբաժինների գումարի և ընկերության տեղաբաշխած հասարակ բաժնետոմսերի քանակի (շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող անձանց ցանկը կազմելու օրվա դրությամբ) հարաբերություն:

TELCELL	«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	Ծածկագիր՝ ԿԿ/290724/02	Խմբագրություն՝ 1.0	Էջ 4 / 6
			Ոչ գաղտնի	

14. Շահութաբաժնի չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{Շ}^{\text{մ}} = \text{Շ}^{\text{ն}} / \text{Ք}^{\text{հբ}},$$

որտեղ՝

Շ^մ-ը մեկ հասարակ բաժնետոմսին ընկնող շահութաբաժնի չափն է.

Շ^ն-ը՝ տեղաբաշխված բոլոր հասարակ բաժնետոմսերի գծով վճարվող շահութաբաժինների ընդհանուր գումարն է.

Ք^{հբ}-ը՝ ընկերության տեղաբաշխված բոլոր հասարակ բաժնետոմսերի ընդհանուր քանակն է:

15. Բաժնետերերին վճարվող շահութաբաժինների ընդհանուր գումարը հաշվարկվում է հասարակ մեկ բաժնետոմսի շահութաբաժնի չափի և բաժնետիրոջը պատկանող հասարակ բաժնետոմսերի քանակի արտադրյալով:

16. Ընկերությունը վճարվելիք շահութաբաժնի նվազագույն գործակիցը (payout ratio) սահմանում է 50 տոկոս:

6. Շահութաբաժինների վճարման մասին որոշում ընդունելու կարգը և վճարման ժամկետները

17. Համաձային ընկերության կանոնադրության՝ շահութաբաժիններ կարող են վճարվել միջանկյալ և տարեկան արդյունքներով:

18. Ընդհանուր ժողովը տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժինների չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ընկերության խորհրդի առաջարկով:

19. Ընկերության խորհուրդն ընդունում է միջանկյալ շահութաբաժինների վճարման, շահութաբաժինների չափի և դրա վճարման ձևի մասին որոշում:

20. Ընդհանուր ժողովը իրավունք ունի ընդունել տարեկան շահութաբաժիններ չվճարելու մասին որոշում:

21. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Ընդհանուր ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ:

22. Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Ընկերության խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:

TELCELL	«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	Ծածկագիր՝ ԿԿ/290724/02	Խմբագրություն՝ 1.0	Էջ 5 / 6
			Ոչ գաղտնի	

23. Տարեկան և միջանկյալ շահութաբաժինները վճարվում են շահութաբաժինների վճարման մասին որոշումների ընդունումից հետո՝ մեկ տարվա ընթացքում:

24. Սահմանված ժամկետներում շահութաբաժիններ չվճարելու դեպքում դրանք կուտակվում և վճարվում են հետագայում՝ բաժնետիրոջ առաջին իսկ պահանջով:

7. Շահութաբաժինների վճարման կարգը

25. Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Ընկերության խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն՝

1) միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են ընկերության բաժնետերերի ռեեստրում՝ Ընկերության խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ:

2) տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են ընկերության բաժնետերերի ռեեստրում՝ ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

26. Եթե Ընկերության ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:

27. Եթե Ընկերության ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

28. Ընկերությունը հայտարարված շահութաբաժինները կարող է վճարել Հայաստանի Հանրապետության դրամով, ինչպես նաև այլ գույքով, այդ թվում՝ ընկերության բաժնետոմսերով:

29. Ընկերության բաժնետերերին Հայաստանի Հանրապետության դրամով շահութաբաժինները վճարվում են կանխիկ կամ անկանխիկ ձևով՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները:

TELCELL	«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	Ծածկագիր՝ ԿԿ/290724/02	Խմբագրություն՝ 1.0	Էջ 6 / 6
			Ոչ գաղտնի	

30. Ֆիզիկական կամ իրավաբանական անձ հանդիսացող բաժնետիրոջը շահութաբաժնի վճարում է համարվում այդ գումարի փոխանցումը բաժնետիրոջ բանկային հաշվին՝ ըստ բաժնետիրոջ տրամադրած բանկային վավերապայմանների, կամ «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի թողարկած էլեկտրոնային փողի հաշվառման հաշվին:

31. Ընկերությունը և նրա պաշտոնատար անձինք պատասխանատվություն չեն կրում այն բաժնետերերի շահութաբաժինների չվճարման և կրած վնասների համար, որոնք չեն ներկայացրել, սխալ են ներկայացրել բանկային վավերապայմաններ:

32. Բաժնետիրոջ կողմից իր բանկային վավերապայմանները չներկայացնելու դեպքում շահութաբաժինը պահպանվում է ընկերության հատուկ հաշվին և Բաժնետիրոջ կողմից գրավոր ձևով դիմում ներկայացվելու դեպքում կատարվում է փոխանցում բաժնետիրոջ տրամադրած հաշվեհամարին:

33. Բաժնետիրոջ կողմից իր բանկային վավերապայմանները սխալ ներկայացնելու պատճառով ոչ ճիշտ փոխանցված շահութաբաժիններն ընկերությանը վերադարձվելուց հետո կատարվում է ճշգրտված վավերապայմաններով դրանց կրկնակի փոխանցում բաժնետիրոջը՝ այն փաստաթղթերի հիման վրա, որոնք բաժնետերն ընկերությանը ներկայացրել է գրավոր ձևով: Ընդ որում՝ նշված պարագայում ընկերությունն իրավասու է շահութաբաժնից նվազեցնել փոխանցված գումարի վերադարձման և կրկնակի փոխանցման համար կատարված ծախսերը:

34. Շահութաբաժիններ չեն վճարվում ընկերության հետգնած սեփական բաժնետոմսերի դիմաց:

35. Համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության՝ ընկերությունը բաժնետերերին իրենց բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ վճարելիս հանդիսանում է հարկային գործակալ: